Հաստատված է

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

2012թ. փետրվարի 28-ի թիվ 2 նիստում

ԳԽ նախագահ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

Տնօրեն՝ Ս.Ա. Առաքելյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը սահմանում է ԵՊՀ ԻՄ-ի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գործունեության իրավական հիմքերը:
2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետը մասնաճյուղի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա մշակում և ֆակուլտետի խորհրդում ընդունում է իր կանոնադրությունը, որը հաստատվում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում:
3. Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:
4. Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի որոշմամբ:
5. Ֆակուլտետի կանոնադրության և ֆակուլտետի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են կանոնադրության դրույթները:
6. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝

   հայերեն՝ Հումանիտար Գիտությունների ֆակուլտետ

   ռուսերեն՝ Факультет Гуманитарных наук

   անգլերեն՝ Faculty of the Humanitarian sciences
7. Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ Ք. Իջևան
8. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետը ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր կանոնադրությանը համապատասխան օժտված է իրավունքներով և կրում է պարտականություններ:

9. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի կառավարման մարմինների, ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:
10. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետն ունի կնիք, (հայերեն լեզվով), սահմանված կարգով կարող է ունենալ նաև պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

II. ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

11. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետը ԵՊՀ ԻՄ-ի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանում է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն մի քանի մասնագիտություններով:
12. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությանը, ԵՊՀ ԻՄ-ի ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը:
13. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետը, ելնելով իր կողմից իրականացվող կրթական, մանկավարժական, գիտական, ուսումնաօժանդակ և տեխնիկական աշխատանքների բնույթից, ըստ սահմանված չափանիշների մշակում է իր հաստիքացուցակը, որը հաստատվում է տնօրենի կողմից:
14. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետին մասնաճյուղի արտաբյուջետային միջոցներից կարող են հատկացվել գումարներ՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի որոշմամբ: Այդ գումարները ֆակուլտետը տնօրինում է ինքնուրույն՝ ուսումնագիտական նպատակներով:

III. ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

15. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:
16. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և դեկանը, որոնք իրենց իրավասության սահմաններում ընդունում են ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությանը, ԵՊՀ ԻՄ-ի ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը:
17. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետի խորհուրդը կազմված է ի պաշտոնե և ընտրովի անդամներից: Խորհրդի ի պաշտոնե անդամների թիվը չի կարող գերազանցել խորհրդի կազմի 50%-ը: Ֆակուլտետի խորհրդի անդամների թիվը առաջարկում է մասնաճյուղի գիտական խորհուրդը՝ ելնելով ֆակուլտետի կառուցվածքից: Խորհրդի անդամների թիվը ամրագրվում է ֆակուլտետի կանոնադրության մեջ:
18. Հումանիտար գիտությունների Ֆակուլտետի խորհրդի ի պաշտոնե անդամներն են ֆակուլտետի դեկանատի անդամները: Ֆակուլտետի խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունները համամասնորեն առաջադրում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց թիվը հաշվարկվում է ըստ հաստիքների թվաքանակի: Խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել միայն տվյալ ստորաբաժանման հիմնական և ներքին համատեղությամբ աշխատողները:
19. Խորհրդի անդամների 25%-ը սովորողներն են, որոնց ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:
20. Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է, որի ավարտից մեկ ամիս առաջ դեկանը տնօրենի հաստատմանն է ներկայացնում խորհրդի անդամների նոր ցուցակը:
21. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհուրդն օրինակելի կանոնադրության հիման վրա ընդունում է ֆակուլտետի կանոնադրությունը, փոփոխություններ ու լրացումներ է առաջարկում, քննարկում է դեկանների թեկնածություններ և ներկայացնում առաջարկ դեկանին պաշտոնանկ անելու մասին, լսում է դեկանի ամենամյա հաշվետվությունը և գնահատում նրա գործունեությունը:

22. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան 8 անգամ մեկ ուսումնական տարում, իսկ ամենամյա նիստերը՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո՝ ըստ տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցի:

23. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի նախագահը դեկանն է, որը հրավիրում է խորհրդի նիստերը:

Դեկանի թեկնածության քննարկման և հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերը վարում է խորհրդի կողմից ընտրված նախագահողը: Դեկանը չի կարող լինել այդ նիստերի նախագահողը:

Դեկանի պաշտոնանկության հարցը քննարկելու նպատակով հրավիրվող նիստը վարում է տնօրենը:

Խորհրդի նիստի նախագահողը բացում և փակում է նիստը, առաջարկում է նիստի աշխատակարգը, ապահովում է դրա կատարումը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:

24. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի քարտուղարը ի պաշտոնե ֆակուլտետի դեկանատի քարտուղարն է:

25. Դեկանի կողմից նիստը հրավիրելու անհնարինության դեպքում խորհրդի նիստը հրավիրվում է դեկանի պաշտոնակատարի կամ տնօրենի կողմից:

26. Խորհրդի նիստն իրավազոր է խորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է խորհրդի նիստի անցկացման նոր ժամանակը՝ նույն օրակարգով:

Խորհրդում դեկանի թեկնածուի ընտրության և պաշտոնանկության քվեարկությունը փակ և գաղտնի է:

27. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել տնօրենը:

28. Խորհրդի կողմից դեկանի ամենամյա հաշվետվությունը լսելու նիստում խորհուրդը քվեարկությամբ գնահատում է դեկանի գործունեությունը: Դեկանի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում տնօրենը մեկ շաբաթվա ընթացքում

հրավիրում է խորհրդի նիստ՝ դեկանին անվստահություն հայտնելու հարցի քննարկման և որոշում ընդունելու համար:

Դեկանին անվստահություն հայտնելու խորհրդի նիստի ընթացքում ընթացակարգային խախտումներ հայտնաբերելու դեպքում տնօրենը հնգօրյա ժամկետում՝ մինչև պաշտոնանկության նպատակով հրավիրված նիստը, խորհրդում նշանակում է նոր քվեարկություն:

29. Դեկանին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում տնօրենը հնգօրյա ժամկետում լուծում է դեկանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
30. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, կողմերի հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ԵՊՀ ԻՄ-ի համացանցային կայքում:
31. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհուրդն իր իրավասության շրջանակներում քննարկում և լուծում է ֆակուլտետի գործունեությանն առնչվող հիմնական հարցերը:
32. Առաջարկություններ է ներկայացնում տնօրենին ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ, լաբորատորիաներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու վերաբերյալ:
33. Ընդունում է ֆակուլտետի զարգացման ծրագիրը:
34. Ընտրում է ֆակուլտետի ներկայացուցիչներին ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում:
35. Քննարկում է ֆակուլտետի ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները:
36. Քննարկում է ֆակուլտետի կիսամյակային և տարեկան քննաշրջանների արդյունքները:
37. Քննարկում է ավարտական աշխատանքների պաշտպանության և ավարտական պետական քննությունների արդյունքները:

39. Սահմանված կարգով մրցութային ընտրության համար առաջադրում է ֆակուլտետի ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական համակազմի թեկնածուներ:
40. Սահմանված կարգով քննարկում և երաշխավորում է մագիստրատուրա և ասպիրանտուրա ընդունվողների թեկնածությունները:
41. Սահմանված կարգով ուսումնամեթոդական վարչության քննարկմանն է ներկայացնում անվանական կրթաթոշակ ստացողների թեկնածությունները:
42. Լսում է ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների վերաբերյալ հաշվետվությունները, գիտակրթական գործունեությունների վերաբերյալ հաղորդումները:
43. Քննարկում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ընդունված որոշումների դեմ բերված բողոքները:
44. Իր կազմից ձևավորում է մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:
45. Լուծում է ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված և ֆակուլտետի կանոնադրությունից բխող այլ հարցեր:
46. Սահմանված կարգով քննարկում է հայցվող գիտական կոչումը ստանալու երաշխավորության հարցը:
47. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է դեկանը՝ իր իրավասությունների սահմաններում և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան:
48. Դեկանը կարող է ունենալ տեղակալ, որին դեկանի ներկայացմամբ նշանակում է տնօրենը:
49. Դեկանի պաշտոնի համար թեկնածուների առաջադրումը, ընտրությունների անցկացումը, դեկանի հետ աշխատանքային պայմանագրի կնքումը և պաշտոնում հրամանագրելը կատարվում է ԵՊՀ ԻՄ-ի դեկանների ընտրության կարգով (2011թ. փետրվարի 24):
50. Ֆակուլտետի դեկանը՝
    - կազմակերպում և վերահսկում է ֆակուլտետի գործունեությունը կրթական, գիտական և այլ ոլորտներում,
    - ապահովում է ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը,
    - տնօրենի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալի, ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածուներին,

- սահմանված կարգով մասնաճյուղի տնօրենին առաջարկություններ է ներկայացնում ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, նույն կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, տեղափոխման (այլ բուհից կամ այլ մասնագիտությունից) ուսուցման ձևի փոփոխման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ,
- կազմակերպում է ուսումնական դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը,
- վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը,
- իր լիազորությունների շրջանակում խրախուսում, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ենթարկում ուսանողներին,
- տնօրինում է ֆակուլտետին հատկացված ֆինանսական միջոցները, այդ մասին հաղորդում է ֆակուլտետի խորհրդին ամենամյա հաշվետվություն ներկայացնելու ժամանակ,
- լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից բխող և ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

51. Դեկանը արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ, որոնք պարտադիր են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների և սովորողների համար:

52. Ֆակուլտետի գործունեության ընթացիկ հարցերի լուծման համար ֆակուլտետում գործում է խորհրդակցական մարմին՝ դեկանատ, որի կազմի մեջ մտնում են դեկանը, նրա տեղակալը, ամբիոնի վարիչները, ֆակուլտետի խորհրդի քարտուղարը, արհիյուրոյի նախագահը և ուսանողական խորհրդի նախագահը:

53. Դեկանատը հարցերը քննարկում է դեկանի առաջարկով:

54. Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար ֆակուլտետում գործում է մեթոդական խորհուրդ, որի ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգով:

55. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդը հարցերը (ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և այլն) քննարկում է դեկանի առաջարկով կամ ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:

IV. ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

56. Ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են ամբիոնները: Ֆակուլտետում կարող են գործել նաև լաբորատորիաներ, կենտրոններ և գիտակրթական ու այլ ստորաբաժանումներ:

57. Ամբիոնները ֆակուլտետի կրթագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են:

58. Ամբիոնն ապահովում է ուսումնական գործընթացը, իրականացնում է մեթոդական և գիտական հետազոտություններ:

59. Ամբիոնները գործում են ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության, ԵՊՀ ԻՄ-ի իրավական ակտերի և ֆակուլտետի կանոնադրության հիման վրա:

60. Ամբիոնի վարիչը կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետի, ԵՊՀ ԻՄ-ի ստորաբաժանումների, ինչպես նաև մասնաճյուղից դուրս այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում:

61. Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և ամբիոնի վարիչին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգով (2011թ. փետրվարի 24):

62. Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչը, ըստ սահմանված կարգի, տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս ֆակուլտետի գիտական խորհրդում: Ամբիոնի աշխատանքների մասին ամբիոնի վարիչի հաշվետվությունների ժամկետները և ձևերը սահմանում է ֆակուլտետի խորհուրդը:

63. Ֆակուլտետի խորհրդում ամբիոնի վարիչի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում հնգօրյա ժամկետում հրավիրվում է խորհրդի արտահերթ նիստ, որի քննարկմանն է դրվում ամբիոնի վարիչին ետ կանչելու հարցը: Փակ, գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշում կայացնելու դեպքում ֆակուլտետի խորհուրդը միջնորդում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ հաստատելու ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը:

64. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում տնօրենը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը չհաստատվելիս հնգօրյա ժամկետում հրավիրվում է ֆակուլտետի խորհրդի նոր նիստ: Ֆակուլտետի խորհրդի նիստի մասնակիցների ձայների երկու երրորդով ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը վերահաստատելու դեպքում տնօրենը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված պայմանագիրը:

65. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները և դասախոսները: Ամբիոնի կազմի մեջ մտնում են նաև ասպիրանտները և ուսումնաօժանդակ համակազմը:

66. Ամբիոնը, ելնելով կատարվող կրթական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքների ծավալից ու ձևերից, ըստ սահմանված կարգի մշակում է իր աշխատողների ուսումնական բեռնվածությունը:

67. ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումն իրականացվում է մրցութային ընտրությամբ՝ ՊԴԱ տեղակալման կարգի համաձայն:

68. Ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան և ընդգրկում են ուսումնամեթոդական, գիտահետազոտական և աշխատանքի այլ տեսակները:

69. Ամբիոնի կրթական և գիտական հարցերը քննարկվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի նիստերում: Ամբիոնի նիստերին վճռական ձայնի իրավունքով մասնակցում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի հիմնական աշխատողները: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դեկանը կամ տեղակալը, ամբիոնի գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողները:

Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարեկան ութ անգամ:

Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի ու գործավարի կողմից:

70. Կենտրոնի կամ լաբորատորիայի գործունեության հիմնական հարցերը քննարկվում են կենտրոնի կամ լաբորատորիայի համակազմի նիստերում: Կենտրոնի կամ լաբորատորիայի ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողներն այդ նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

71. Կենտրոնների և լաբորատորիաների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումն ընդունում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը՝ ֆակուլտետի գիտական խորհրդի առաջարկությամբ:

72. Ֆակուլտետի կանոնադրության հավելվածի տեսքով ներկայացվում են տվյալ ֆակուլտետի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են.

- Պատմության և քաղաքագիտության ամբիոն
- Հայոց լեզվի և գրականության ամբիոն
- Մանկավարժության և հոգեբանության ամբիոն
- Օտար և ռուսաց լեզուների ամբիոն
- Համակարգչային լսարան
- Կիրառական հոգեբանության լաբորատորիա